ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Անժելիկա Ստեփանյան, ՀՀ ֆինանսների նախարարության Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հոկտեմբերի 9-ից 13-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ներքին պարտքի շուկայի զարգացում» խորագրով դասընթացին: Դասընթացի շրջանակներում ներկայացվել են ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի կողմից մշակված՝ Տեղական արժույթով արտահայտված պարտատոմսերի շուկայի գնահատման մեթոդաբանության բաղկացուցիչները, որոնք թույլ են տալիս վերլուծել համապատասխան ոլորտներում շուկայի զարգացման աստիճանը և, ըստ այդմ, մշակել թիրախային բարեփոխումների ծրագիր ներքին պարտքի շուկայի արդյունավետ գործառնությունը ապահովելու համար:

5. Քննարկված թեմաները.

- Տեղական արժույթով արտահայտված պարտքի շուկայի (LCBM) շրջանակը և ընդհանուր բնութագիրը,
- Դրամական շուկա,
- Առաջնային շուկա,
- Երկրորդային շուկա,
- Ներդրողների շրջանակ,
- Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքներ,
- Իրավական և կարգավորման շրջանակ,

- Բարեփոխումների հաջորդականություն, շուկայի LCBM շրջանակի բաղկացուցիչների միջև փոխկապվածություններ,
- Ընդհանուր մարտահրավերներ և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներ,
- Թողարկումների շրջանակ,
- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց,
- Առաջնային շուկայի մասնակիցներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին մասնակում էին 18 երկրների 24 ներկայացուցիչներ: Նախատեսված դասախոսություններն ուղեկցվում էին թեմատիկ քննարկումներով և իրավիճակային վերլուծություններով: LCBM շրջանակի բոլոր բաղկացուցիչների ուսումնասիրության արդյունքում, ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի կողմից մշակված գնահատման գործիքի կիրառմամբ, յուրաքանչյուր մասնակցի կողմից իրականացվել է իր երկրի ներքին պարտքի շուկայի ինքնագնահատում, ներկայացվել են ոլորտային ձեռքբերումները և առկա հիմնախնդիրները, վերհանվել են շուկայի կատարողականի բարելավման հնարավոր միջոցառումները: Քննարկվել են նաև գնահատման գործիքի հետագա վերանայման և բարելավման ուղղությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

18 հոկտեմբերի, 2023թ.